Աշոտ Գ. Մանուչարյան
Պատմ. գիտ. թեկնածու

ԱՐՁԱՆԱԳԻՐ ԽԱՉՔԱՐ ԹԵԹՐԻԾՂԱՐՈՅԻՑ*

Բանալի բառեր – եկեղեցի, ամրոց, խաչքար, արձանագրություն, վերծանություն, հիշատակ, թագավորություն, մայրաքաղաք, իշխանաց իշխան:

Մուտք

Վրաստանի Հանրապետության Քվեմո Քարթլի երկրամասի **Թեթրիծղարոյի** մունիցիպալիտետը հարուստ է հայկական պատմամշակութային հուշարձաններով, քանի որ վաղ ժամանակներում նրա տարածքների հարավարևմտյան հատվածը մաս է կազմել Գուգարաց բդեշխության, զարգացած միջնադարում ընդգրկվել է Բագրատունյաց թագավորության կազմում, ապա՝ անցել Կյուրիկյան հարստությանը (972–1118 թթ): Ավելի ուշ շրջանում այստեղ բնակություն են հաստատել արցախցիներ և արևմտահայեր: Այսինքն՝ այս տարածաշրջանում միշտ էլ ապրել, արարել, ստեղծագործել է հոծ հայություն, որի թողած պատմամշակութային հարուստ ժառանգությունը (եկեղեցիներ, վիմագրեր, խաչքարեր, տապանաքարեր, ամրոցներ) կարոտ է ուսումնասիրության:

Այսօր Թեթրիծղարոյի վարչական շրջանում կա 4–5 հայաբնակ գյուղ (Դաղեթ, Մեծ Դուրնուկ, Փոքր Դուրնուկ, Սամշվիլդե, Սամգերետի)[1] և ավելի քան 10 բնակավայր՝ «վրացախոս հայերով բնակեցված»[2]:

Այս վարչական միավորի համանուն Թեթրիծղարո (თეთრიწყარო = Սպիտակ աղբյուր, Белый ключ, Ağ bulaq) քաղաքում գտնվող հայկական միջնադարյան եկեղեցու ներսում դրված է արձանագրված խաչքար, որը հին է եկեղեցուց և մեկ այլ վայրից այստեղ է բերվել ավելի ուշ:

*Հոդվածն ընդունվել է տպագրության 10.05.2021:

1 Տես //ru.wikipedia.org/wiki/Тетрицкаройский муниципалитет.

2 «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հատ. 2, աշխատ. **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.**, Եր., ԵՊՀ հրատ., 1988, էջ 430:

ԴԷՄ համահայկական ամսագիր, ԺԴ (ԺԹ) տարի, թիվ 2 (74), ապրիլ-հունիս, 2021

1. Խաչքարն ու արձանագրությունը

Կոթողի խաչապատկերը իր ժամանակին բնորոշ պարզունակ հորինվածքով է՝ առանց ճոխ գեղարվեստական նրբաքանդակության, սակայն բովանդակում է խաչելությունը՝ Գողգոթա լեռան բարձունքին, խաչի վրա հեղված փրկչական արյունը և Տիրոջ հարությունը: Հնագետ Համլետ Պետրոսյանը, անդրադառնալով այդ դարաշրջանի խաչքարերին, նշում է, որ խաչքարագործական արվեստում XI դարի կեսերից սկսած նկատվում է «ակնհայտ հետընթաց ու վերադարձ դեպի հին պարզունակ տեսակները (որը տևում է մինչև 12-րդ դարի կեսերը)»[3]:

Լուսանկար



Գրչագիր

3 **Պետրոսյան Հ.**, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Եր., «Պրինտինֆո» հրատ., 2008, էջ 111:

2. Արձանագրության վերծանությունը և բովանդակությունը

Խաչքարի վրա 13 տողով արձանագրված է հետևյալը.

ՆՃ (1051) ԹՈԼԻԱԿԱՆԻՆ՝ ՀԱՅՈՑ՝, ԼՍՈՒՐՔ ԽԱՉ / [illegible] / ՄԵՐ. ԵՒ
ՅՈԼԻՄԺ Է / ՁՎԱՐԴ՝ Զ/ԱՐԱՐՈՂ ԽԱ/ՉԻՍ: ՅԻ/ՇԵՋԻՔ ԵՒ ՁԱՂԲԱՅՐԻԿ ԻՄ՝
ԾԱՌԱ [illegible]: /
ԽԱՉ [illegible]Է / ՓՐԿՈՂ ԱԼՄՅԲԱՏԱ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻՆ:

Շատ հետաքրքրական արձանագրություն է մի քանի առումներով: Նախ՝ թվականի հարցը: Եթե բնագրում չլինեին ուրիշ **Ծ** տառեր, ինչպես **Ա՚ՍՏՈՒԱ՚Ծ** բառի պատվագրված տարբերակում (**[illegible]**) և **ԾԱՌԱ** ձևում, ապա երկնիշ թվականի երկրորդ տառը կվերծանեինք **Ծ** տասնավոր (50), որի դեպքում տարեթիվը կլիներ **ՆԾ** (= 450 + 551 = 1001): Սա վերծանության ճիշտ, տարածված ձև կլիներ, որը կազմվել է թվականի ընդունված ավանդական-դասական կարգով՝ հարյուրավոր (Ն= 400) + տասնավոր (Ծ = 50) սկզբունքով: Թվականում չկա միավոր կարգի թիվ (Ա–Թ= 1–9): Թվականի 1001-ի դեպքում կլիներ երկակի իրողություն. կկարծեինք, թե խաչքարը կանգնեցվել է Հիսուս Քրիստոսի ծննդյան 1000 և քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 700-ամյա հոբելյանների կապակցությամբ, ինչը բնորոշ է այդ ժամանակին: Մի քանի առիթներով ասել ենք, որ մեր նախնիները նոր հազարամյակի նախաշեմին կամ սկզբին սպասել են Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստին:

Ի դեպ, վիմագրի բովանդակությունը բաղկացած է երկու մասից. առաջինում կոթողը կերտող Վարդը մեր Տեր Յիսուս Քրիստոս Աստծուն փառաբանում է, որ ուժ տվեց իրեն՝ խաչքար արարողին: Նաև դիմում է խաչը [խաչքարը] երկրպագողներին, գիրը ընթերցողներին), որպեսզի հիշեն իրեն ու եղբորը՝ Աղբայրիկին, որը հոգևորական է՝ **ԾԱՌԱ Ք՚ՐԻՍՏՈՍ՚Ի**, ընդ որում՝ բարձրաստիճան (քահանա կամ նրանից բարձր): Ավելի ուշ՝ XIII դ., Աղբայրիկ անվամբ հայտնի է Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի Տեղերի հիասքանչ վանքի ճարտարապետը, որը 1213–1232 թթ. կառուցել է այդ վանական

համալիրի շինությունները (Ս. Աստվածածին եկեղեցին, գավիթը, տանիքի երկու գմբեթարդ մատուռները)[4]:

Արձանագրության երկրորդ մասում Վարդ խաչքարագործ վարպետը Քրիստոսի խաչով փրկություն է հայցում Սմբատ իշխանաց իշխանին: Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավոր Դավիթ Անհողինը (989/96–1048/50) ունեցել է Սմբատ անվամբ եղբայր, որը պիտի եղած լինի իշխանաց իշխան: Քնության առարկա վիմագրի 1001 թ. լինելու պարագայում կարելի էր ենթադրել, որ իր հորեղբոր՝ Հայոց և Վրաց շահնշահ (արքայից արքա) Գագիկ Ա.-ի (990–1020) գերագահության նկատմամբ անհնազանդություն դրսևորած Դավիթ Անհողինն այդ թվականին պարտվում է Բագրատունի հզորագույն թագավորին[5]՝ նրան զիջելով «որոշ բերդեր և հողեր»[6], մասնավորապես՝ «Աղստևի միջին հոսանքի հովիտը՝ Կայան ու Կայծոն բերդերով և Տավուշ գավառը»[7]: Դրանից էլ կարելի է ենթադրել, որ այդ իրադարձությունների ընթացքում Սմբատն ինչ-որ փորձության մեջ է հայտնվել:

Սակայն ՆԾ (1001) թվականը մեր արձանագրության պարագայում սխալ է, որովհետև, ինչպես ասվել է, բնագրում **ձ** տառը նման չէ երկիցս օգտագործված **Ծ**-ին: Հետևաբար թվականը պետք է վերծանել **ՆՃ** (1051): Այստեղ թվագրությունը, ինչպես կասեր վիմագրագետ Գրիգոր Գրիգորյանը, կատարվել է «ոչ ավանդական-դասական եղանակով»՝ հարյուրավոր (Ն 400) + հարյուրավոր (Ճ –100) սկզբունքով, որը երբեմն հանդիպում է վիմագրերում[8]՝ փոխանակ միանգամից **Շ** (500) փորագրվելու:

Ինչ վերաբերում է ՅԻ/ՇԵՋԻՔ ձևին, ապա գրաբարում հրամայական եղանակի հոգնակի թվի նման կազմություն պատահում է այլ վիմագրերում ևս, մասնավորապես Սյունյաց թագավորության (970–1170) վեհության խորհրդանիշ ու փառքի տաճար Վահանավանքում: Դրա վերաբերյալ Գրիգոր Գրիգորյանն անում է հետևյալ դիտարկումը. «Լեզվաբանական առումով հետաքրքրություն է ներկայացնում **յ ի շ ե ս ջ ի ք** բայաձևը, որ փորագրված է առանց ս-ի, որպիսի երևույթ տեսնում ենք նաև այլ արձանագրություններում... Դասական գրաբարի ստորադասական եղանակի երկրորդ ապառնու երկրորդ դեմքը, իբրև կանոն, գրվում է ս-ով, որը բացակայում է հիշյալ (Վահանավանքի – Ա. Մ.) երկու բնագրերում»[9]:

---

4 Տես **Տեր-Մինասյան Ե.**, Ամբերդաձորի հնությունները և արձանագրությունները, «Էջմիածին», 1961, Ե., էջ 51-52: **Բարխուդարյան Ս.**, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1963, էջ 55:

5 Տես **Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ,** Պատմութիւն տիեզերական, հրատ. Մալխասեանց Ստ., ՍՊբ., տպ., Ի. Ն. Սկորոխոդովի, 1885, էջ 280:

6 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. III, Եր., ԳԱ ՊԻ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, էջ 103 (այսուհետև՝ ՀԺՊ, III և էջը):

7 «Հայոց պատմություն», հատ. II, գիրք 2, Եր., ԳԱԱ ՊԻ, «Զանգակ» հրատ., 2014, էջ 132 (այսուհետև՝ ՀՊ, II, 2-րդ և էջը):

8 Տես **Գրիգորյան Գ.**, Հայկական վիմագրություն, Եր., «Զանգակ-97» հրատ., 2000, էջ 80:

9 **Գրիգորյան Գ.**, Վահանավանք, Եր., «Զանգակ-97» հրատ., 2007, էջ 65:

3. Սմբատ իշխանաց իշխանի ինքնությունը

Սմբատը, ինչպես նկատել է Արտաշես Շահնազարյանը, սկզբնաղբյուրներում անուշադրության է մատնվել. «Փոխարենը սկզբնաղբյուրները մեծ տեղ են հատկացրել պետական ու ռազմական գործչի անուրանալի հատկանիշներով օժտված Դավիթ Կյուրիկյանին, որն ավելի շատ հայտնի է Դավիթ Անհողին անունով»[10]:

Իր հզորության գագաթնակետին Տաշիր-Զորագետի (Լոռու) Կյուրիկյան թագավորությունը, ըստ Ռաֆայել Մաթևոսյանի, հյուսիսից «սահմանակից էր Վիրա-ափխազաց թագավորության և Տփղիսի արաբական ամիրայության, արևելքից Գանձակի քրդական ամիրայության, իսկ արևմուտքից՝ Բագրատունյաց կենտրոնական թագավորության (Շիրակ) հետ: Հարավում այն սահմանակցում էր Պահլավունիների տիրույթներին (Այրարատի Նիգ գավառ), որից բաժանվում էր Փամբակի լեռնաշղթայի կենտրոնական մասից ձյուղավորվող Ծաղկունյաց լեռնաշղթայով»[11]:

Տերության մայրաքաղաքը, համաձայն Ստեփանոս Տարոնեցու վկայության, Դավիթ Կյուրիկյանը «հանդերձ եղբարբն իւրով Սմբատաւ ունի զկողմանս Տաշրաց և զՎրաց դաշտի. զՇամշուլտեայ[12] մեծ քաղաքանիստ դղեակն նիստ արքունական պատրաստեալ ինքեան՝ արագապէս տիրէ քաղաքին Դմանեաց, հնազանդեցուցանէ և ամիրայն Տփղեաց քաղաքաւն իւրով»[13]: Ապա պատմագիրը շարունակում է հիացմունքով պատմել Դա-

10 ՀՊ, հատ. II, 2-րդ գիրք, էջ 130:

11 **Մաթևոսյան Ռ.**, Տաշիր-Զորագետ (X դ. - XII դ. սկիզբ), Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, էջ 75:

12 **Շամշուլդե** (վրաց. Սամշվիլդի = Երեք նետաղեղ = სამი მშვილდი) ամրոց-բերդաքաղաքը պատմականորեն գտնվել է Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիր գավառում, այժմ՝ Վրաստանի Թեթրիծղարոյի շրջանում՝ Խրամ գետի ձախ ափին, Թեթրիծղարո քաղաքից 5 կմ հարավ-արևելք: Վաղ միջնադարում պատկանել է Գուգարքի հայ բդեշխներին (տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հատ. 4, աշխատ. **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.**, Եր., ԵՊՀ հրատ., 1998, էջ 73): Խալիֆայության գերիշխանության շրջանում (VIII-IX դդ.) մաս է կազմել Տփխիսի արաբական ամիրայության: Սմբատ Ա. Բագրատունի (890-914) թագավորն այն ազատագրել է արաբներից, միացրել հայկական թագավորությանը՝ Տաշիրի կառավարումը (Շամշուլդե կենտրոնով) հանձնելով Վասակ և Աշոտ Գնթունի եղբայրներին, որոնք, սակայն, հետագայում հրաժարվել են ճանաչել Աշոտ Բ. Երկաթի (914-928) գերագահությունը, ինչի համար հայոց արքայից պատժվել են (տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, տպ. Ն. Աղանեանցի, 1912, էջ 295, 313): Բագրատունյաց թագավորության անկումից հետո Շամշուլդեն վերստին անցել է Տփխիսի ամիրայությանը: X դ. վերջին, ինչպես վերն ասվել է, Դավիթ Անհողինը բերդաքաղաքն ազատագրել է և դարձրել Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորության արքայանիստը: 1064 թ. սելջուկ սուլթան Ալփասլանը (1063-1072) Կյուրիկյաններից գրավում է Շամշուլդեն, ապա խաղաղության դաշն է կնքում Կյուրիկե Ա. (1048/50-1089) արքայի հետ «և վերջինիս դուստրը կնության է ուզում իր վեզիր Նիզամ ալ Մուլքին» (ՀԺՊ, III, էջ 455): Դրանից հետո, ինչպես երևում է, սելջուկները Շամշուլդե բերդաքաղաքը վերադարձրել են Կյուրիկյաններին՝ բավարարվելով Տաշիր-Զորագետի թագավորության նկատմամբ իրենց գերիշխանության հաստատմամբ: Որոշ ժամանակ անց վրաց թագավոր Բագ(ա)ռատ Դ-ն (1027-1072) հայերից գրավում է Շամշուլդեն և միացնում իր թագավորությանը (տե՛ս «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», թարգմ. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, հատ. Ա., Եր., «Մելքոնյան ֆոնդ» հրատ., 1934, էջ 208): 1087/8 թ. սելջուկները վերստին տիրանում են Շամշուլդեին (տե՛ս ՀԺՊ, III, էջ 455): 1110 թ. վրաց Դավիթ Շինարարը (1089-1125) սելջուկներից հետ է խլում Տաշիրի այդ հայտնի բերդաքաղաքը և միացնում վրացական թագավորությանը (տե՛ս նույն տեղում, էջ 524): 1236 թ. Շամշուլդեն գրավում են մոնղոլները (տե՛ս նույն տեղում, էջ 608):

13 **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ**, էջ 256:

վիթ Անհողինի հաղթանակների մասին, որը «արիացեալ քաջութեամբ, քաջազօր զօրութեամբ յաղթող եղեալ ամենայն հակառակորդաց իւրոց»[14]:

Այդ հաղթական պատերազմներում, այդ թվում՝ Գանձակի ամիրա Փատլուն Ա.-ի (985-1031) դեմ, անտարակույս, ի պաշտոնե իր մասնակցությունն է ունեցել Լոռու թագավորության իշխանաց իշխան Սմբատը՝ Դավիթ Անհողինի եղբայրը: IX դ. վերջի - XII դ. սկզբի հայկական թագավորությունների (և ոչ միայն հայոց) պետական կարգը գրեթե միանման էր: Բագրատունյաց հարստության շրջանում իշխանաց իշխան բարձրագույն տիտղոսը կրել են երկրի սպարապետը, ասպետն[15] ու մարզպանը: Իշխանաց իշխանին համարժեք էր տերանց տերը, ինչպես կոչվում է հայոց սպարապետ Շապուհ Բագրատունին Վանեվանի 903 թ. վիմագրում[16]: Ավելի ուշ իշխանաց իշխան էր հայոց սպարապետ Վահրամ Պահլավունին (998-1045): Սյունյաց թագավորությունում իշխանաց իշխանը կոչվում էր նաև մեծ իշխան և անձամբ գլխավորում էր ռազմական գործողությունները[17]:

1051 թ. իշխանաց իշխան Սմբատը դեռևս ողջ էր, քանի որ Թեթրիծղարոյի խաչքարի հիշատակագրության «Խաչ ØÆ է փրկող Սլմյ բատա իշխանաց իշխանին» վերջաբանում՝ գիկկուրատի մեջ և դրանից ներքև, բացակայում է **հոգի** բառը («Խաչ ØÆ է փրկող հոգոյ Սլմյ բատա իշխանաց իշխանի»), որով կցուցվեր արքաեղբոր վախճանված լինելը:

Սանահնի վանական համալիրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ՇԺ (1061) թվականի ընծայագրում՝ «Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ԿԻՒՐԻԿԷԻ, ՈՐԴՈՅ ԴԱՒԹԻ ԱՐՔԱՒ», Կյուրիկյան թագավորության իշխանաց իշխան է հիշատակվում «ՇԱՊՈՒՀԻԿ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ, ՈՐԴԻ ԳԱՐԲԱՆԻԷԼԻ, Ի ՏՈՀՄԷ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ»[18]:

Սա նշանակում է, որ 1061 թ. իշխանաց իշխան Սմբատը կենդանի չէր և նրան Տաշիր-Զորագետի ինքնակալության զինված ուժերի գործակալի պաշտոնում հաջորդել է ռազմական հզոր ավանդույթներ ունեցող Պահլավունյաց տոհմի ներկայացուցիչ Շապուհիկը:

---

14 Նույն տեղում, էջ 257:

15 Տես **Մանուչարյան Ա.**, Վիմագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ, Եր., «Լուսաբաց» հրատ., 2015, էջ 81-84: Ասպետները, թագադիր լինելուց զատ, նաև զորավարներ էին:

16 Տես «Դիվան հայ վիմագրության», պր. IV, Գեղարքունիք, կազմեց **Բարխուդարյան Ս.,** Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 121-122:

17 Սյունյաց թագավոր Սենեքերիմի (1072/84-1094/96) որդի Հասանը Նորավանքի գավթի հարավային լուսամուտի միջնորմի մեջ ագուցված խաչքարի արձանագրությունում հիշատակվում է «իշխանաց իշխան» («Դիվան հայ վիմագրության», պր. III, Վայոց ձոր, կազմեց **Բարխուդարյան Ս.,** Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 121-122): Ստեփանոս Օրբելյանը նրան կոչում է «մեծ իշխան» (**Ստեփաննոս Օրբէլեան,** Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, Ելեքտրաշարժ տպ., 1910, էջ 326):

18 «Դիվան հայ վիմագրության», պր. IX, Լոռու մարզ, կազմեցին **Բարխուդարյան Ս., Ղաֆադարյան Կ., Սաղումյան Ս.,** Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, էջ 76 (այսուհետև՝ Դիվան, պր. IX և էջը):

Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ հայր Ղևոնդ Մովսեսյանը իշխանաց իշխան Սմբատին շփոթում է Կյուրիկե Ա. արքայի համանուն եղբոր հետ[19]: Վերջինս Կյուրիկեի հետ հիշատակվում է Հաղբատի Ս. Նշան եկեղեցու ՇԺԲ (1063) նվիրատվական արձանագրությունում[20], իսկ նույն սրբարանի ՇԼԲ (1083) շինարարական վիմագրում հանդես է գալիս որպես «ՍՄՊԱՏ ԹԱԳԱՒՈՐ»[21]: Նա Կյուրիկեի հետ թագավոր է նշվում նաև Նեղուցի ՇԼԵ (1086) թ. տերունական խաչքարի հիշատակագրությունում[22]:

Եզրակացություններ

1. Թեթրիծղարոյի 1051 թ. խաչքարը կազմող Վարդ վարպետը մեզ այլուստ հայտնի չէ:
2. Հիշատակվող իշխանաց իշխան Սմբատը Տաշիր-Զորագետի արքա Դավիթ Անհողինի կրտսեր եղբայրն է: Եղել է Տաշիր-Զորագետի թագավորության սպարապետը: Վախճանվել է 1051-1061 թթ. միջակայքում:
3. Սմբատ Կյուրիկյանի ռազմաքաղաքական ողջ գործունեությունը ծավալվել է Տաշիր-Զորագետի թագավորության Շամշուլդյան շրջանում, երբ ինքնակալության արքայանիստը Շամշուլդե բերդաքաղաքն էր: Ուստի բացառված չէ, որ 1051 թ. խաչքարը Թեթրիծղարո քաղաքի հայկական եկեղեցում հայտնված լինի այդ ամրոցից:

Աշոտ Ա. Մանուչարյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են՝ վիմագրագիտություն, հայոց միջնադարյան քաղաքական պատմություն, Հայ եկեղեցու պատմություն, պատմամշակութային հուշարձանների (վանքերի, եկեղեցիների) ուսումնասիրություն, հայկական պատմական աղանդներ և ժամանակակից աղանդավորական շարժումներ: Հեղինակ է 7 գրքերի, գրքույկների (մի մասը՝ եռալեզու՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն), 75 գիտական հոդվածների և հրապարակումների:

Էլ. հասցե - ashot.manucharyan.1959@mail.ru

19 Տե՛ս Լոռիի Կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը, գրեց՝ Մովսէսեան հ. Ղեւոնդ, Վիեննա, Մխիթարեան տպ., 1923, էջ 38, 48:
20 Տե՛ս Դիվան, պր. IX, էջ 136:
21 Նույն տեղում, էջ 135:
22 Տե՛ս նույն տեղում, էջ 253:

Summary

AN INSCRIBED KHACHKAR FROM TETRITSKARO

Ashot G. Manucharyan
Candidate of Sciences in History

Key words – medieval, church, castle, khachkar, inscription, decoding, memory, kingdom, capital, prince of princes.

Inside the Armenian medieval church in the Georgian town of Tetritskaro (თეთრიწყარო = White Spring) there is a khachkar (cross stone) with a lapidary inscription.

We assume that the khachkar was moved from the Samshvilde fortress, whose ruins are located 5 km southeast of Tetritskaro town. Shamshvilde was the early capital of the Armenian kingdom of Tashir-Dzoraget.

The lapidary inscription on the khachkar consists of 13 lines. It was created by master Vard in 1051 in memory of himself and his brother Aghbayrik, who was a priest.

At the end of the inscription, prince of princes Smbat of the Tashir-Dzoraget kingdom (972-1118) is mentioned. He was the brother of King David Anhoghin of Tashir-Dzoraget (989/996-1048/50). Prince of princes Smbat was the commander-in-chief of the Tashir-Dzoraget kingdom. He died between 1051-1061

Резюме

ХАЧКАР С НАДПИСЬЮ ИЗ ТЕТРИЦКАРО

Ашот Г. Манучарян
Кандидат ист. наук

Ключевые слова: средневековый, церковь, замок, хачкар, надпись, расшифровка, память, царство, столица, князь князей.

Внутри армянской средневековой церкви в грузинском городе Тетрицкаро (=თეთრი წყარო = Белый ключ) расположен хачкар с лапидарной надписью.

Предполагаем, что хачкар был перенесен из крепости Шамшулде, руины которой находятся в 5 км к юго-востоку от города Тетрицкаро. Шамшулде был ранней столицей армянского Ташир-Дзорагетского царства.

Лапидарная надпись на хачкаре состоит из 13 строк. Хачкар был создан мастером Вардом в 1051 году в память о себе и о своем брате Ахбайрике, который был священником.

В конце надписи упоминается князь князей Смбат (972–1118 гг.). Он был братом царя Ташир-Дзорагетского царства Давида Анхогина (989/996-1048/50). Князь князей Смбат был главнокомандующим войск Ташир-Дзорагетского царства. Он умер в период 1051-1061 гг.

REFERENCES

1. **Barkhudaryan S.,** Mijnadaryan hay chartarapetner ev kʻargorts varpetner, Er., HSSR GA hrat., 1963 **(In Armenian)**.
2. «Divan hay vimagrutʻyan», prak III, "Vayotsʻ dzor", kazmetsʻ Barkhudaryan S., Er., HSSH GA hrat., 1967 **(In Armenian)**.
3. «Divan hay vimagrutʻyan», prak IV, "Geghark'unikʻ", kazmetsʻ Barkhudaryan S., Er., HSSH GA hrat., 1973 **(In Armenian)**.
4. «Divan hay vimagrutʻyan», prak IX, "Loṛu marz", kazmetsʻin Barkhudaryan S., Ghafadaryan K., Saghumyan A., Er., HH GAA «Gitutʻyun» hrat., 2012 **(In Armenian)**.
5. **Grigoryan G.,** Haykakan vimagrutʻyun, Er., «Zangak-97» hrat., 2000 **(In Armenian)**.
6. **Grigoryan G.,** Vahanavankʻ, Er., «Zangak-97» hrat., 2007 **(In Armenian)**.
7. "Hayastani ev harakitsʻ shrjanneri teghanunneri baṛaran", h. 2, **Hakobyan Tʻ., Melikʻ-Bakhshyan St., Barseghyan H.,** Er., EPH hrat., 1988 **(In Armenian)**.
8. "Hayastani ev harakitsʻ shrjanneri teghanunneri baṛaran", h. 4, **Hakobyan Tʻ., Melikʻ-Bakhshyan St., Barseghyan H.,** Er., EPH hrat., 1998 **(In Armenian)**.
9. «Hay zhoghovrdi patmutʻyun», GA PI, Er., HSSH GA hrat., 1976 **(In Armenian)**.
10. «Hayotsʻ patmutʻyun», h. II, girkʻ 2-rd, GAA PI, Er., «Zangak» hrat., 2014 **(In Armenian)**.
11. **Hovhannes Draskhanakerttsʻi,** Patmutʻyun hayotsʻ, Tʻiflis, tp. N. Aghanyantsʻi, 1912 **(In Armenian)**.
12. https: //ru.wikipedia.org/wiki/ Tetrickarojskij_ municipalitet **(In Russian)**.
13. **"**Loṛii Kiwrikean tʻagaworneru patmutʻiwně**"**, gretsʻ **Movsesyan h. Ghevond,** Vienna, Mkhitʻarean tp., 1923 **(In Armenian)**.
14. **Manuchʻaryan A.,** Vimagrerě orpes Hayastani kʻaghakʻakan patmutʻyan skzbnaghbyurner, Er., «Lusabatsʻ» hrat., 2015 **(In Armenian)**.
15. **Matʻevosyan Ṛ.,** Tashir–Dzoraget (X d. - XII skizb) Er., HSSH GA hrat., 1982 **(In Armenian)**.
16. **Petrosyan H.,** Khachʻkʻar. tsagumě, gortsaṛuytʻě, patkeragrutʻyuně, imastabanutʻyuně, Er., «Pʻrintinfo» hrat., 2008 **(In Armenian)**.
17. Stepʻannos Orbēlean, Patmutʻiwn nahangin Sisakan, Tʻiflis, elektrasharzh tp., 1910 **(In Armenian)**.
18. Stepʻanos Taronetsʻi Asoghik, Patmutʻiwn tiezerakan, hrat. Malkhaseantsʻ St., S. Pb., tp. I. N. Skorokhodovi, 1885 **(In Armenian)**.
19. **Ter-Minasyan E.,** Amberdadzori hnutʻyunnerě ev ardzanagrutʻyunnerě, «Ejmiatsin», 1961, N 5 **(In Armenian)**.
20. Vratsʻ aghbyurnerě Hayastani ev hayeri masin, tʻargm. **Melikʻset'-Bek L.**, h. I, Er., «Melkʻonyan fond» hrat., 1935 **(In Armenian)**.

Հանդես ամսագիր, պատմական գիտություններ, 2021 թիվ 2 (74)